ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ 70-ԱՄՅԱԿԻՆ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի շրջանակներում և Հայաստանի երիտասարդական հիմնադրամի ֆինանսավորմամբ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում և ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը 2013 թ. նոյեմբերի 15-17-ը ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ արվեստաբանների խորհուրդը գումարեց երիտասարդ հայ արվեստաբանների գիտական ութերորդ նստաշրջանը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյակին:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ինչպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ), ՀՀ գիտակրթամշակութային այլ օջախների՝ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ), Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Երևանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ), Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի (ԵԳՊԱ), Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (ՎՊՄԻ), այնպես էլ Նովոսիբիրսկի ճարտարապետության և գեղարվեստի պետական ակադեմիայի (ՆՃԳՊԱ) և Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) քաղաքացի ասպիրանտները:

Բացման խոսքով հանդես եկավ Արվեստի ինստիտուտի տնօրեն, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը. *«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երիտասարդ հայ արվեստաբանների հերթական, թվով արդեն ութերորդ նստաշրջանը նվիրված է ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանին: Ինչպես և նախորդ տարին, այս անգամ ևս, մեր նստաշրջանի կազմակերպմանը նպաստել է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի հովանու ներքո իրականացվող երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը և Հայաստանի երիտասարդական հիմնադրամը: Կարևորում եմ այս գիտաժողովներն այն առումով, որ առաջինը՝ տեսնում ենք, որ մեր արվեստաբանությունը, հայագիտության այդ բնագավառը, ունի հուսալի հերթափոխ, մենք դրանում համոզվում ենք տարեցտարի, երկրորդը՝ որ երիտասարդ գիտականները հնարավորություն են ստանում ակադեմիական բարձր ամբիոնից զեկուցումներ կարդալու շատ հեղինակավոր լսարանի առջև»:*

Ողջունելով գիտական նստաշրջանի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը *նշեց. «Ուրախալի է, որ Գիտությունների ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտություններ բաժանմունքի բոլոր ինստիտուտներում ավանդույթ է դարձել հրավիրել երիտասարդ գիտնականների գիտաժողովներ: Սա հույս է ներշնչում, որ իսկապես մեր գիտությունը չի ծերանում, ինչպես հաճախ կարծում են: Գիտության մեջ հանդես են գալիս երիտասարդ գիտնականներ, և համոզված եմ, որ նրանք պատվով կշարունակեն իրենց ավագ սերնդի ստեղծած ավանդույթները, կզարգացնեն հայ գիտությունն իրենց բնագավառներում»:*

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԲՈՀ-ի նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր Լիլիթ Արզումանյանը. *«Այսօր մեր հասարակության մեջ ունենք մեծ չարիք՝ արտագաղթը: Ցավոք, այսօր արտագաղթում են նաև երիտասարդներ, որոնք կրթություն են ստացել մեր երկրում: Այս և նման քայլերը կապում են երիտասարդությանը երկրի գիտությանը, հասարակական-քաղաքական կյանքին, մշակույթին, սեր են տարածում մեր կյանքում: Այս առումով չափազանց արժևորում եմ Արվեստի ինստիտուտի ղեկավարության միտումը՝ նման ձևով ապրելու, և այդ հավատամքը, որ իրենք ունեն»: ՀՀ ԳԱԱ երիտասարդ գիտնականների խորհրդի նախագահ* Գևորգ Վարդանյանը, *շնորհավորելով գիտաժողովի մասնակիցներին, նշեց, որ երիտասարդ գիտնականների կազմակերպած, ՀՀ ԳԱԱ հիմնադրման 70-ամյա հոբելյանին նվիրված արդեն ութերորդ գիտաժողովն է, և երիտասարդ արվեստաբանների նստաշրջանը արդեն երկրորդ տարին անընդմեջ ֆինանսավորում է Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագիրը, ինչը վառ ապացույցն է, որ նստաշրջանն ավանդական և շատ կարևոր է դարձել:*

Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական նստաշրջանին ողջունեց նաև Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտի տնօրեն, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Աշոտ Գրիգորյանը. *«Ես շատ կարևորում եմ այս միջոցառումը, որը, անկասկած, հույս է ներշնչում, որ մեր ազգային ակադեմիայի ուշադրությունից դուրս չեն մնացել մեր երիտասարդները: Բավական է ծանոթանալ նստաշրջանի ծրագրին՝ թե՛ քանակական և թե՛ որակական առումով անչափ հետաքրքիր զեկուցումներ են սպասվում: Եվ կարծում եմ, որ սա շատ լավ հիմք պետք է լինի երիտասարդների միավորման և համագործակցության առումով: Կարևոր է, որ մասնակցում են ոչ միայն ակադեմիայի, այլև Երևանի ուսումնական հաստատությունների և, հատկապես, մեր հարևան պետության՝ Իրանի Իսլամական Հանրապետության արվեստաբանները»:*

Գիտաժողովի մասնակիցներին ուղղված ողջույնի խոսքով հանդես եկավ Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, ՀՀ ԳԱԱ նորաստեղծ հիմնի հեղինակ, կոմպոզիտոր Արամ Սաթյանը. *«Երիտասարդների մասին խոսելիս ուզում եմ ասել այն, ինչ ժամանակին մեզ ասել են մեր մեծերը՝ եղե՛ք համարձակ: Դուք պատասխանատու եք մեր երկրի ապագայի համար և այդ պատասխանատվության զգացումը պետք է տանեք ձեր ուսերի վրա մինչև ձեր կյանքի վերջը…»:*

Եռօրյա նստաշրջանի հինգ նիստերի ընթացքում ընթերցվեցին 40 զեկուցումներ, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղերը. երաժշտագիտություն, կերպարվեստագիտություն, ճարտարապետության պատմություն և կինոգիտություն:

Կերպարվեստ: *«Համաշխարհային և հայկական կինոփառատոնային ազդագրերի զարգացումը 1930-ականներից մինչև մեր օրերը» զեկուցմամբ հանդես եկավ ՀՀ ԳԱԱ ԱԻ կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արտավազդ Եղիազարյանը: Նա դիտարկեց կինոփառատոնային ազդագրերի զարգացման գործընթացը ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական կինոծրագրերի օրինակներով: Ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարտին Հարությունյանը «Գառնիի արքունի բաղնիքի խճանկարը որպես մշակութային միջոցառումների գրաֆիկական դիզայնի հիմնական տարրերից մեկը» բանախոսության մեջ գիտականորեն վերլուծեց և կիրառելի օրինակներով ներկայացրեց, թե ինչպես կարելի է Գառնու արքունական բաղնիքի խճանկարը դարձնել տարբեր միջոցառումների գրաֆիկական դիզայնի տարր:*

«Այլաբանական նատյուրմորտները Ռուդոլֆ Խաչատրյանի արվեստում» զեկույցում ԵՊՀ հայցորդ Հռիփսիմե Վարդանյանը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) անդրադարձավ Ռ. Խաչատրյանի նատյուրմորտներին՝ խոսելով վերջինիս ոճական, կառուցվածքային առանձնահատկությունների մասին: Տիեզերքի և աստղագիտության թեմայի արտացոլումը Հովհաննես Զարդարյանի գեղանկարչության մեջ խնդիրն արծարծեց ԵԳՊԱ ասպիրանտ Լիլիթ Արսենյանը (գիտական ղեկավար՝ Ա. Ավագյան)՝ քննության առնելով նկարչի բյուրականյան բնանկարները, դիմանկարները և թեմատիկ ստեղծագործությունները: ՀՀ ԳԱԱ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող Մանե Մկրտչյանը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) «Սիմվոլիզմի դրսևորումները Եղիշե Թադևոսյանի արվեստում» զեկույցում անդրադարձավ նկարչի սիմվոլիզմի ազդեցություն կրող ստեղծագործություններին: Միր Մալասի ժայռապատկերների մասին էր ՀՀ ԳԱԱ ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Ֆարզադ Շիրնասաբզադեհի (գիտական ղեկավար՝ Ֆ. Տեր-Մարտիրոսով) բանախոսությունը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի հայցորդ Անի Հայկազունը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) «Երևանի քաղաքային պանթեոնի հուշակոթողների գեղարվեստական առանձնահատկությունները» զեկուցման մեջ շոշափեց պանթեոնային հուշակոթողների տիպային, հորինվածքային առանձնահատկությունները: Մատենադարանի N 7976 ձեռագրի յուղաներկով ստեղծված Աստվածամոր նկարի մասին էր ՄՄ գիտաշխատող Դավիթ Ղազարյանի (գիտական ղեկավար՝ Վ. Ղազարյան) զեկուցումը, որտեղ բանախոսը զուգահեռներ անցկացրեց հայ կերպարվեստի XVII-XIX դարերի ստեղծագործությունների միջև և ակնարկեց կտավի ստեղծման ժամանակն ու վայրը: ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Զահրա Մալեքին (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) «Ֆաթահ Ուսուլիի գեղանկարչական ստեղծագործությունները» զեկուցման մեջ անդրադարձավ իրանցի նորարար գեղանկարչուհու արվեստի առանձնահատկություններին՝ ընդգծելով վերջինիս արվեստում արտահայտվող գրականության և պատմության ազդեցությունների մասին: «Սուրբ Թադե եկեղեցու զարդագոտու նախատիպի խնդիրը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ ԱԻ հայցորդ Լիլիթ Կարապետյանը (գիտական ղեկավար՝ Զ. Հակոբյան) քննության առավ Սբ. Թադե և Սբ. Աղթամար եկեղեցիների ճակատագոտու նմանությունները, պատկերագրական համակարգը և ոճային տարբերությունները: ՎՊՄԻ դասախոս, արվեստագիտության թեկնածու Արամ Համբարյանը ներկայացրեց քանդակագործ Բ. Դիլոյանի ստեղծագործական զարգացման փուլերը՝ մատնանշելով հարակից այն ազդեցությունները, որոնք նկա- տելի են այդ շրջաններում կերտված ստեղծագործություններում: «Փանոս Թերլեմեզյանի հասարակական գործունեությունը» բանախոսության մեջ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող Մերի Կիրակոսյանը (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) ներկայացրեց անվանի նկարչի՝ հասարակական, քաղաքական, մշակութային գործչի դիմանկարը, գիտական շրջանառության մեջ դնելով արվեստագետի գործունեությանն առնչվող դեռևս անհայտ տեղեկություններ: Հայաստանում 1960-1980-ական թթ. դիզայնի ձևավորման գեղարվեստակիրառական և հասարակական նախադրյալներին էր վերաբերում ՀՊՄՀ դասախոս Լիլիթ Մելիքյանի (գիտական ղեկավար՝ Հ. Հակոբյան) զեկուցումը:

Երաժշտություն: *ՀՀ ԳԱԱ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Գայանե Ամիրաղյանի զեկուցումը նվիրված էր «Մեծ պահքի կիրակիների շարականները անթիլիասական ավանդույթում» թեմային, որտեղ դիտարկվեցին*

Մեծ պահքի վեց կիրակիների կարգերում ներառված շարականները՝ ըստ հայ հոգևոր երգարվեստի անթիլիասական ավանդույթի: Միքայել Թարիվերդիևի «Սպասում» օպերայի մասին էր ԱԻ հայցորդ Նաիրա Գրիգորյանի զեկուցումը: Բանախոսը ներկայացրեց մոնոօպերայի ստեղծման պատմությունը՝ մեջբերելով կոմպոզիտորի և նրա այրի՝ երաժշտագետ Վերա Թարիվերդիևայի հիշողությունները և անդրադարձավ օպերայի երաժշտաարտահայտչական առանձնահատկություններին: Ն. Գրիգորյանի մյուս՝ «Միքայել Թարիվերդիևի «Ֆիգարենկոյի ամուսնությունը» օպերան» զեկուցումը բացահայտեց օպերայի ստեղծման պատմությունը և ընդհանուր կառուցվածքը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Հովհաննես Մանուկյանն անդրադարձավ Հայաստանի երգեհոնային դպրոցի հիմնադիր Վահագն Ստամբոլցյանի կատարողական և մանկավարժական գործունեությանը՝ բացահայտելով վերջինիս դերը կատարողական դպրոցի կայացման գործում: «Հարություն Դելլալյանի «Նվիրում Կոմիտասին» դաշնամուրային ստեղծագործության կատարողական խնդիրները» բանախոսության մեջ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Լիլիթ Արտեմյանը վերլուծեց ստեղծագործության տեխնիկական առանձնահատկությունները, կատարողական տեսանկյունից դիտարկված գեղարվեստական գաղափարը: ԵՊԿ հայցորդ Սոֆյա Ղազարյանն անդրադարձավ հայկական մանկական դաշնամուրային երաժշտության մոռացված էջերին, արծարծեց կոմպոզիտորների անհայտ ստեղծագործությունների ուսումնասիրման անհրաժեշտությունը: ԱԻ հայցորդ Սոնա Մակարյանը հանդես եկավ «Պավել Լիսիցյանը՝ հայ բեմի առաջին Արշակ» զեկուցմամբ, որտեղ ներկայացրեց Լիսիցյանի կերտած հայկական առաջին օպերայի՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայի պրեմիերային: Կոմպոզիտոր Հրաչյա Մելիքյանի ստեղծագործական վաղ շրջանում գրված գործերից մեկի՝ «Հեքիաթների աշխարհում» դաշնամուրային շարքին անդրադարձավ ԵՊԿ ասպիրանտ Անահիտ Մարգարյանը (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան): «Երաժշտության խորհրդաբանությունը Փիլոն Ալեքսանդրացու երկերում և դրա արտացոլումը հայ միջնադարյան մեկնողական գրականության մեջ» զեկուցմամբ հանդես եկավ ՄՄ գիտաշխատող Արուսյակ Թամրազյանը (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան): ԵՊԿ ասպիրանտ Անի Առուշանյանը (գիտական ղեկավար՝ Մ. Կոկժան) «Վարիացիոն սկզբունքների դրսևորումը հայ դաշնամուրային տրանսկրիպցիաներում» բանախոսության մեջ վերլուծեց վարիացիոն մտածողության համակցման ինքնատիպ դրսևորումը Ռ. Անդրեասյանի և Գ. Սարաջյանի դաշնամուրային տրանսկրիպցիաներում: « Կոնտրաբասի արվեստը Հայաստանում» թեմայով լսվեց ԵՊԿ ասպիրանտ Սարգիս Բալբաբյանի զեկուցումը: ԱԻ հայցորդ Արմինե Աթոյանը վերլուծեց Գեղունի Չթչյանի «Երեք աղոթք» խմբերգային շարքը: «Միխայիլ Կոկժանի «Կամերային սոնատը» Իգոր Յավրյանի և Լուսինե Հակոբյանի կատարմամբ» բանախոսությամբ ԵՊԿ ասպիրանտ Սուսաննա Ղազարյանը (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) կատարեց միևնույն ստեղծագործության կատարողական մեկնաբանությունների համեմատական վերլուծություն: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Շուշանիկ Մուրադյանի զեկույցը Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի (1901-1910) մասին էր: Բանախոսը հայ երաժշտության մեջ առաջին անգամ ուսումնասիրեց Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Տաթևիկ Շախկուլյանի զեկուցումը նվիրված էր Կոմիտասի արխիվի մի տետրի

անտիպ ստեղծագործություններին, որոնցից երեք դաշնամուրային ստեղծագործությունները թեև անավարտ են, սակայն ինքնատիպ են և արժանի ուշադրության:

Ճարտարապետություն: *«Շիրակավանի ճարտարապետական հորինվածքի վերակազմությունը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտարապետության թեկնածու Արեգ Հասրաթյանը ներկայացրեց Բագրատունյաց Հայաստանի IX դ. նշանավոր տաճարներից մեկի՝ Շիրակավանի Ամենափրկիչ եկեղեցու հորինվածքի եռաչափ համակարգչային գրաֆիկայով իրականացված վերակազմությունը: ՆՃԳՊԱ ասպիրանտ Դավիթ Նահատակյանը (գիտական ղեկավար՝ Լ. Վոլսկայա) անդրադարձավ Տայքի և Գուգարքի X-XI դդ. պաշտամունքային կառույցների լուսամուտների գեղարվեստական հարդարման հիմնական երեք տիպերին՝ կամարունքով, կամարով և դեկորատիվ որմնասյուներով: ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Արման Լուկասի (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան) բանախոսությունը նվիրված էր Նոր Ջուղայի ապարանքների ճարտարապետության ոճական առանձնահատկություններին: Հեղինակը մեկնաբանեց ապարանքների մասին եղած պատմողական տեղեկությունները, հատակագծային-տարածական տվյալները: Ա. Լուկասի մյուս բանախոսությունը վերաբերում էր Նոր Ջուղայի կառուցապատման և բնակելի ճարտարապետության զարգացման վաղ շրջանին, որտեղ բնութագրեց քաղաքի տեղանքը, բնակավայրի տարածական ձևագոյացումը, գոտևորումը և թաղամասի կառուցապատման առանձնահատկությունները: «Հողմ-աշտարակները Դուբայի արդի ճարտարապետության մեջ» թեմային անդրադարձավ ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Յաշար Հոսեինզադե Նաղադեն: ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Աբբաս Ռահիմիանը (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան) ներկայացրեց «Հանրայնության» ճարտարապետական միջոցառումները հասարակական վայրերում» բանախոսությունը: «Թեհրանի թատերական շենքերի դասակարգումը» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ ԱԻ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Սառա Մալեք Մոհամմադին (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան) տեսության մեջ եղած թատերական տիպերի հետ համեմատական կարգով վերլուծեց փաստագրական օրինակների տիպաբանական առանձնահատկությունները: ԵԳՊԱ ասպիրանտ, ԻԻՀ քաղաքացի Վահադատ Յարմոհամադիի (գիտական ղեկավար՝ Դ. Քերթմենջյան) բանախոսությունը նվիրված էր Աքեմենյան Իրանի հեթանոսական տաճարների կազմավորման գործընթացին:*

Սփյուռքահայ արվեստ: *ՀՊՄՀ դասախոս, արվեստագիտության թեկնածու Աննա Ադամյանը հանդես եկավ «Տիգրան Չուխաճյանի դաշնամուրային ստեղծագործության պատմական նշանակությունը» բանախոսությամբ: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող Լիլիթ Հակոբյանը (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) անդրադարձավ իրանահայ կոմպոզիտոր Նիկոլ Գալանդերյանի «Փարվանա» օպերային: Նիկոլ Գալանդերյանի երգերի լեզվառճական բնութագրին էր վերաբերում ԵՊԿ ասպիրանտ Շուշան Այվազյանի ելույթը: Բարսեղ Կանաչյանի «Աբեղա» օպերայի մասին էր ԱԻ ասպիրանտ Տաթևիկ Արշակյանի (գիտական ղեկավար՝ Ա. Ասատրյան) զեկուցումը: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող Մարգարիտա Քամալյանի (գիտական ղեկավար՝ Ա. Աղասյան) բանախոսությունը նվիրված էր Ժան Գառզուի բեմանկարչության մասին ֆրանսիական մամուլի արձագանքին: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Արսեն Համբարձումովը «Ոսկե Ծիրան» X երևանյան միջազգային*

կինոփառատոնի որոշ ֆիլմերի և կինոարվեստում փաստարկման գործընթացի մասին» բանախոսության մեջ դիտարկեց կինոփառատոնի շրջանակներում ցուցադրված «Սոսկ կյանք» (2012), «Ձայն լռության» (2012) ֆիլմերը, որոնց օրինակով խոսեց կինոարվեստում փաստարկման գործընթացի մասին:

Գիտական նստաշրջանի շրջանակներում երիտասարդ արվեստաբանների համար կազմակերպվեց զրույց-դասախոսություն Աշոտ Գրիգորյանի հետ, իսկ մշակութային ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ հանդիպում Արամ Սաթյանի հետ:

Եզրափակիչ խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանը: Նստաշրջանն անցավ կառուցողական քննարկումների և հարցադրումների մթնոլորտում: Առաջիկայում կհրատարակվի նստաշրջանի նյութերի ժողովածուն:

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Մ. Ա.